ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ
Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն
հիմնադրամի նախագահ,
գրականագետ, թարգմանիչ

ՀՄԱՅԻՉ ՄԱՐԴԸ

Այս անցողիկ կյանքի մեջ բնական պատված գեղեցկություններ կան, կան սրտի փափագներն իրողության տանող ճանապարհներ, և անհնարինը հնարավոր դարձնող զարմանահրաշ իրողություններ: Այդ հմայքի մեջ, սակայն, չպետք է մոռանալ կյանքի հենքն ու հիմքը կազմող Գոյի իրողությունը, որի վրայով անցնում է մեր կյանքի ժամանակը:

Իսկ կարևորը Մարդ գոյության փաստն է, որը չկորցնելու համար հարկ է, որ անհատը բռնի ինքն իրեն ճանաչելու ուղին՝ բարոյական նորմերի սահմաններում: Յուրաքանչյուր անհատի գործունեությունն այս եռացող մոլորակի վրա պալմանավորված է տվյալ անհատի մտավոր և հոգևոր ներուժի և, իհարկե, այդ ներուժը գործի դնելու համար շուրջն արդեն ձևավորված կյանքի կերպից: Եվ յուրաքանչյուր անհատի ներուժի հնարավորություններից է կախված այն հանգամանքը, թե որքան մեծ շրջանակներում կարող է գործել նա:

1982-ին ինձ բախտ վիճակվեց ծանոթանալու մի Անհատի հետ, որը մեծ գիտնական լինելուց բացի, անսահման բարի, անհիշաչար, ճշմարիտ, հայրենիքին նվիրված, սրբազնագույն անձնավորություն է:

Յակով Խաչիկյանը լոռեցի է, իսկ Լոռեցին միշտ էլ ունեցել է իր ուրույն նկարագիրը: Յակով Իվանովիչն, ապրելով Երևանում, մի ներքին ձայնով միշտ կապված է իր հայրենի եզերքի լեռների ու բարձունքների, փեշերի հողի, զուլալ ջրերի, ծառ ու ծաղիկների հետ: Դրա արգասիքը նրա կազմած «Ստեփանավանցիներ» հանրագիտարանն է, որը բավականին ծանր ու քրտնաջան աշխատանքի արդյունք է:

Մեր ծանոթությունը վերածվեց բարեկամության: Միասին հյուրընկ-

կալեցինք կուբացի գրողների պատվիրակությանը՝ Դավիթ Չերիսյանի գլխավորությամբ, լիտվացի բանաստեղծների, ռուս մտավորականների: Միասին շրջագայեցինք Լիտվայում, հյուրընկալվեցինք մեր ժողովրդի մեծ բարեկամ, լիտվական ժողովրդական բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսի տանը՝...

Մեժելայտիսը գրախոսեց Խաչիկյանի «Շեքսպիրը արվեստի մասին» գիրքը, որը ռուսերեն տպագրվեց Երևանում («Կոմունիստ» օրաթերթ, 10 օգոստոսի, 1985թ.): Մեժելայտիսը հաճախ էր հիշում իր հայ բարեկամ պրոֆեսոր Խաչիկյանին և նրա հետ ունեցած հանդիպումները՝ միշտ նշելով, որ հիացած է նրա բարձր կուլտուրայով ու ինտելիգենտությամբ և խորը ու բազմակողմանի գիտելիքներով:

Եվ գրեթե քառորդ դար անց ինձ բախտ վիճակվեց վերհիշել այս ամենը՝ ընթերցելով իմ բարեկամի՝ պրոֆեսոր Յակով Իվանի Խաչիկյանի հուշերի գրքերը: Հուշագրության իրավունքը յուրաքանչյուր անհատն ստանում է այն պահին, երբ անցած օրերի պատմության էջերի վրա առավել ցայտուն են գծագրվում իր մասնակցությամբ ձևավորված իրողությունները: Սակայն դա դեռ ամենակարևորը չէ, որ ստիպում է գրիչ վերցնել: Կա նաև պատասխանատվության զգացումի կարևորությունը, ապագայի նկատմամբ ունեցած մտահոգության հավելումով: Ահա այս ամենն է սնել այն պտուղը, որ դարձել է տքնությամբ ապրված իր կյանքի հանրագումար պատկերը՝ Յակով Խաչիկյանի հուշագրությունների տեսքով, որոնք, անտարակույս, արժանավոր են հայոց պատմության արդեն արձանագրված այն տարիների իրողությունների ճշմարիտ մատնանշման ու լուսաբանման համար, որոնք լի են եղել թե պատերազմյան, թե հետպատերազմյան և թե խորհրդային ու հետխորհրդային՝ անցումային տարիների դժվարություններով և ոչ միայն: Յակով Խաչիկյանը տակավին պատանի հասակից հայրենի Լոռվա հրաշագեղության մեջ ստեղծագործում էր, բայց հայրենիքը շեն տեսնելու հույսով մեկնեց ռազմաճակատ, երիտասարդական ավյունը նվիրեց Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Ավագ եղբորը կորցրեց ռազմաճակատում, կորցրեց նաև շատ ընկերների: Հայրենի հիշատակներն իր հետ ռազմաճակատ տարած երիտասարդ զինվորը փիլիսոփայական

խորհրդածություններով ապացուցում էր իր քաղաքակիրթ ու գիտակ անձնավորություն լինելու փաստը: Նույնիսկ այդ ծանր տարիներին նա ապացուցեց, որ ինքն ունի ստեղծագործական հոգի և անհագ ծարավ՝ փնտրելու ու գտնելու բարու, գեղեցիկի աղբյուրը՝ նրանով առավել հարստացնելու համար մարդկային հոգին: Ազնիվ ու լուսավոր ներաշխարհի տեր երիտասարդը ճիշտ ու պինդ էր բռնել բարու և գեղեցիկի փնտրտուքի ճանապարհը:

Հայ գրականությունը հուշագրության օրինակներ շատ ունի, իրենց տարբեր ուղղվածություններով՝ ինքնակենսագրական, ճանապարհորդական, գեղարվեստական: Ժամանակակից հուշագրության հրաշալի օրինակ են պրոֆեսոր Յակով Խաչիկյանի գրքերը, որոնք կյանքի և աշխատանքի նպատակաուղղվածության մասին են և որոնց տակ պետք է հասկանալ ոչ թե անհատի, այլ մի ողջ ժողովրդի կեսդարյա օրագրությունը: Պրոֆեսոր Խաչիկյանի հուշագրությունը սեղմ է, հակիրճ, ճշմարիտ, անկողմնակալ, անկեղծ, ինչպես հեղինակը:

Յակով Խաչիկյանի երակներով հոսող լոռեցու արյունը պահանջում է աչք չփակել մարդկային ոչ ճիշտ կազմակերպվող բարքերի վրա, գնալ նրանց ճիշտ ուղղորդելու, գնահատական տալու ճանապարհով: Դեռ աշակերտական ու ուսանողական նստարաններից հայ ու համաշխարհային գրականության ընթերցանության մեջ հոգևոր բավականությունից զատ կյանքի ճշմարտությունը փնտրեց Յակով Խաչիկյանը: Ուրիշ որտեղի՞ց են գալիս Յակով Խաչիկյան փիլիսոփայի մասնագիտական կենսագրության արմատները: Մարդասիրության գեների միջով, որը նրան տարել է մարդուն երջանիկ տեսնելու ճանապարհով: Մարդասիրական գեներն են խաղում Յակով Խաչիկյանի երակներում, տրոփող քունքերի մեջ՝ տքնաջան աշխատանքի, ուսումնասիրությունների ընթացքում:

Վեհ հոգիները վեհորեն էլ կրում են մարդկային ցավն ու վիշտը: Եվ եթե կսկիծը տանջում է նրանց ողջ կյանքի ընթացքում, ապա մարդ ու բնություն կապի, տիեզերական ներդաշնակության և մարդկային արժանապատվության՝ իրար հետ համաչափության զգացողություններով վեհորեն են կանգնում մարդկայինի դիրքերում:

Հեգելի, Վերնադսկու և Նանսենի ոսկյա մեդալների արժանացած

ռաղանդավոր փիլիսոփա, գրականագետ, հմայիչ մարդ Յակով Իվանի Խաչիկյանի վեհությունը պահող շատ արմատներ խորացել են մանկության օրերին ու սնվել նախնիների այգիները ջրող նույն անապական ջրերով:

Յակով Խաչիկյանը ժամանակն իր ողջ էությամբ զգացող, տիեզերական ներդաշնակությունն ու Տիեզերքը կանգուն պահողների շարքում կանգնած Անհատ է: